



«04» հոկտեմբերի 2009թ.

N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Աբրահամյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 75-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նախագծին կից ներկայացվում են՝

- ա) օրինագծի ընդունման հիմնավորումը,
 - բ) օրենքի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը,
 - գ) գործող օրենքի տեքստը 16.07.2009թ. դրությամբ:
- Խնդրում ենք սահմանված կարգով օրենքի նախագիծը դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 4 թերթ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 24-ի, ՀՕ 200 «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (հետայսու՝ օրենք) լրացնել 14.1-րդ նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 14.1. Հայրենատիրության օր՝ նշվում է նոյեմբերի 22-ին»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՕՐԻՆԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին քառորդ դարի իրադարձությունները ցույց տվեցին, որ քաղաքական զարգացումներն անկանխատեսելի են, և հաճախ անհնարին թվացող բաները դառնում են միանգամայն հնարավոր: Հետևաբար, ազգային-պետական շահի տեսանկյունից խելամիտ է բոլոր հնարավորությունները բաց պահելը: Մասնավորապես, հայ-թուրքական հարաբերություններում չափի լինեն այնպիսի զարգացումներ, որոնք հետագայում սահմանափակեն մեր իրավունքները ու կաշկանդեն մեր գործողությունները: Հաշվի առնելով, որ Հայկական հարցի լուծման մեջ իրավական ոլորտը մեր ուժեղագույն կողմն է, նպատակահարմար է անադարտ պահել մեր իրավունքների հիմքերը և կանխել անցանկալի իրավական մեկնության հնարավորությունները ապագայում:

ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո թոմաս Վիլսոնը նախ Փարիզի վեհաժողովից (26 ապրիլի 1920թ.), ապա Սևրի պայմանագրով ստացել էր հայցադիմում (compromis) որոշելու Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը: Երախտապարտ Հայ ժողովուրդը բարձր է գնահատում Վիլսոնի հետևողական ջանքերը՝ նեցուկ կանգնելու օսմանյան Թուրքիայի կողմից Յեդասպանություն ապրած Հայ ժողովրդին, պաշտպանելու նրա արդար իրավունքներն ու պահանջները, որոնք ամրագրվեցին 1920թ. նոյեմբերի 22-ին ստորագրված պատմական մի փաստաթղթով (Վիլսոնի «ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՌ», որը վերնագրված է. Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի, հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ), որտեղ պարզ քարտեզագրված է Հայաստանի իրական սահմանները: Այս սահմանները հաստատվել են միջազգային իրավարարությամբ, հետևաբար որպես դատական գործիք՝ այն դեռևս ուժի մեջ է: Այսպես, միջազգային իրավունքը, մասնավորապես Հաագայի կոնվենցիայի (1907թ.) 81-րդ հոդվածը, ամփոփել և ամրագրել է իրավարար վճիռների կարգավիճակը, որտեղ ընդհանրապես չի նախատեսվում վճռի չեղյալ հայտարարում, ուստի այն չունի վաղեմության ժամկետ, ասօր էլ ուժի մեջ է այնքան, ինչքան ընդունման պահին: Բացի այդ, այդ սահմանները որոշելը կախված չէր պայմանագրի վավերացումից: Ուստի և, մասնավորապես, լինելով ՄԱԿ-ի լիիրավ անդամ, օգտվելով իրեն վերապահված իրավունքներից, ՄԱԿ-ի միջազգային դատարանի միջոցով հնարավոր է հավաստել (միջազգային դատարանի կանոնադրության 36-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերի հիման վրա) Վիլսոնի իրավարար վճռի վավերականությունը և դրանով իսկ վերահաստատել տիտղոսը Հայաստանին հատկացված տարածքների վրա:

Հետևաբար, մեր ազգային հեռագնա շահերի տեսանկյունից միանգամայն անհրաժեշտ է նոյեմբերի 22-ը պաշտոնապես ամրագրել որպես «Հայրենատիրության օր»: Նոյեմբերի 22-ի ներառումը «Տոների և հիշատակի օրերի

մասին» ՀՀ օրենքում ապագայում մեզ հնարավորություն կտա կանխել Թուրքիայի Հանրապետության կողմից միջազգային համապատասխան կառույցներում էստոպելի (estoppel) վկայակոչումը, այսինքն՝ իրավական այն հիմնադրույթը, երբ իրավատերը՝ տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետությունը իր գործողությունների բացակայությամբ ցույց է տվել, որ հաշտվել է ստեղծված իրավիճակի հետ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին »
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի
ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության
բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի
ընդունումը այլ օրենքների ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Հայաստանի Հանրապետության
Նախագահի առարկությամբ 2001 թվականի հունիսի 24-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇՍԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ծննդյան տոներ և Ամանոր՝ նշվում են դեկտեմբերի 31-ից մինչև հունվարի 6-ը, ոչ աշխատանքային օրեր են դեկտեմբերի 31-ը, հունվարի 1-ը, 2-ը (Ամանոր) և հունվարի 6-ը (Սուրբ Ծնունդ և Հայտնություն):

Հոդված 2. Բանակի օր՝ նշվում է հունվարի 28-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 2¹. Մայրենի լեզվի օր՝ նշվում է փետրվարի 21-ին:

Հոդված 2². Ադրբեջանական ԽՍՀ-ում կազմակերպված ջարդերի զոհերի հիշատակի և բռնազաղթված հայ բնակչության իրավունքների պաշտպանության օր՝ նշվում է փետրվարի 28-ին:

Հոդված 3. Կանանց տոն՝ նշվում է մարտի 8-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 4. Մայրության և գեղեցկության տոն՝ նշվում է ապրիլի 7-ին:

Հոդված 5. Ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է ապրիլի 24-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 6. Աշխատանքի օր՝ նշվում է մայիսի 1-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 7. Երկրապահի օր՝ նշվում է մայիսի 8-ին:

Հոդված 8. Հաղթանակի և խաղաղության տոն՝ նշվում է մայիսի 9-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 9. Հանրապետության տոն՝ նշվում է մայիսի 28-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 10. Երեխաների իրավունքների պաշտպանության օր՝ նշվում է հունիսի 1-ին:

Հոդված 10¹. Բռնադատվածների հիշատակի օր՝ նշվում է հունիսի 14-ին:

Հոդված 11. Սահմանադրության օր՝ նշվում է հուլիսի 5-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 12. Գիտելիքի և դպրության օր՝ նշվում է սեպտեմբերի 1-ին:

Հոդված 13. Անկախության տոն՝ նշվում է սեպտեմբերի 21-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 14. Թարգմանչաց տոն՝ նշվում է հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը:

Հոդված 15. Երկրաշարժի զոհերի հիշատակի օր՝ նշվում է դեկտեմբերի 7-ին:

Հոդված 16. Սուրբ Վարդանանց տոն՝ բարի գործի և ազգային տուրքի օր՝ նշվում է Սուրբ Զատիկից 8 շաբաթ առաջ՝ հինգշաբթի օրը:

Հոդված 17. Սուրբ Էջմիածնի տոն՝ նշվում է Սուրբ Զատիկից 64 օր հետո՝ կիրակի օրը:

Հոդված 18. Հայաստանի Հանրապետությունում կարող են նշվել նաև ավանդական և եկեղեցական տոներ, միջազգային օրեր, իսկ կառավարության որոշմամբ՝ մասնագիտական և այլ տոներ ու հիշատակի օրեր:

Հոդված 19. Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ կառավարությունը կարող է աշխատանքային օրերը տեղափոխել:

Հոդված 20. Ազգային փոքրամասնություններին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են նշել իրենց ազգային տոները և հիշատակի օրերը, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Հոդված 21. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1996 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ:

Հոդված 22. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ (Երևան, 6 օգոստոսի 2001 թ. ՀՕ-200)

Ռ. Քոչարյան